## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

---

ԲՈԼՈՐ ԱՑՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ, *որոնց վերաչ ապառիկներ են մնում, խնդրում ենք շտապել իրանց վերաչ անցեալ կամ ներկաչ տարուանից մնացած պարտքը հասցնելու «Մուրճ»-ի խմբագրութեան։*

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԻԷՐ։ *Ստացանք Ղզլարից, պ. Ցարութիւն Թամազեանից 10 ռուբլի, որով նա նուիրում է «Մուրճ»ի սոյն տարուաչ մի օրինակը նոյն քաղաքի հայոց արական երկդասեան ուսումնարանին։*

ՎՐԻՊԱԿՆԵՐ, «Մուրճ» № 3։ *Պր. Նրանդ Ղազարեանցի յօդուածում՝ «Հողի իշխանութիւնը», գլուխ III մի տեղ ասած է՝ «զօրեղ և յուզուած բնաւորութեան», պէտք է կարդալ՝ զօրեղ և ձուլուած բնաւորութեան։ Գլուխ IV մի տեղ ասուած է՝ «հոգեկան ընդարձակութիւնների», պէտք է կարդալ՝ «հոգեկան ընդունակութիւնների»։*

*Պրոֆեսոր Շուումպֆի յօդուածում «Հայկաբանութիւնը Եւրոպայում» «Մուրճ» № 3, երես 360 տող 8-որդ տպուած է՝ «Պասկալ Օչէ (Aucher)»։ պէտք է կարդալ՝ «Ցարութիւն Աւգեր (Aucher)։ Երես 363, տող առաջին տպուած է՝ «Ժ. Բ. Օչէրը (Aucher), պէտք է լինէր «Մկրտիչ Աւգեր (J. B. Aucher)»։*

*Քաղաքական տեսութեան մէջ, երես 403 «և այդ աղդեցութիւնը նուազում է կամ պակասում», պէտք է լինէր՝ «և այդ աղդեցութիւնը աճում է կամ պակասում»։*

ՏԱՐԱԶԻ ՄԱՆԵՐՆՆԵՐԸ։ *«Մուրճ»-ի յօդուածները, ասում է «Տարազ»-ը, կարծէք թէ պարբերաբար կրկնուում են նոյնութեամբ առանց մի զդալի փոփոխութեան ենթարկուելու։ Մի տեսակ միաձևութիւնով կաչկանդուել է («Մուրճ»-ը), որից թէն ինչպէս երևում է, աշխատում է ազատուել, բայց չէ լաջողուում» (տես «Տարազ», 1891 թ., № 12)։*

*Ընթերցողը արդէն եզրակացնում է այդ տողերից, որ ինչ «Տարազ»-ի կրիտիկոսը լեռոչ պէտք է ասէ, այդ բոլորն դլ*

*պէտք է ծառայէ որպէս ապացոյց իւր այդ հայեացքի։ Եւ կարծում էք թէ նա այդ ապացոյցները չի բերում? Բնաւ չը կարծէք։ «Տարազ»-ը աշխատում է փաստերով ապացուցել, որ «Մուրճ»-ի յօդուածները զգալի փոփոխութեան չեն ենթարկւում։ Եւ ահա թէ որքան ակներև կերպով է նա այդ ապացուցանում։ Տեսութեան առնելով «Մուրճ»-ի անցեալ № 3-ը, նա գտնում է, որ՝*

1) *Պր. Փափազեանցի «Վոսփորի ափերում» վէպի սկիզբը որ տպուած է՝ «կարդացւում է մեծ հետաքրքրութեամբ»։ Եւ յետոյ. «ահա ձեզ կեանք, ահա ձեզ բարեխիղճ ուսումնասիրութիւն» և այլն։*

2) *Պր. Բիշմիշեանցի «Բոյսերի մեծարանքը» կարդացւում է «մեծ հետաքրքրութեամբ»։ Երևում է որ «հեղինակը ժամանակ, միտք և աշխատանք է թափել»։*

3) *Պր. Ե. Ղազարեանի «Հողի իշխանութիւն» յօդուածը «նիւթի կողմից ամենից աւելի հետաքրքրում է ընթերցողին»։*

4) *Հ-ի Քաղաքական տեսութիւնը «լաւ տպաւորութիւն է գործում և լաւ կարդացւում. ամփոփ, կարճ, ճիշտ, մշակուած, նա բոլորովին պարզ գաղափար է տալիս քաղաքական այն ժամանակամիջոցի վերայ,... «և այլն։*

*Մենք ակամայ պէտք է մտածենք՝ այդ ինչպէս է պատահում, որ մէկը «Մուրճ»-ի մի №-ի մէջ գտնում է ա ռ ն ը ւ ա զ ը չորս յօդուած, որոնցից մէկը միւսից լաւ է համարում, և այնու ամենայնիւ իւր կրիտիկան սկսում է բարձրից՝ տհաճութեան արտայայտութիւններով։ Ինչպէս կարող է մէկը ա ն կ ե ղ ծ լինել, երբ նա մի հատ նոմերում չորս ոչ միայն լաւ, այլ և ն ո ր յօդուածներ է գտնում (ամենահինը սկսւել է միայն № 2-ից!) և այնու ամենայնիւ սիրտ է առնում պնդել, թէ յ օ դ ւ ա ծ ն ե ր ը չ ե ն փ ո փ ո խ ւ ո ւ մ։ Մանաւանդ եթէ ի նկատի առնելու լինէք որ նոյն այդ 3-րդ նոմերում, բացի «Տարազ»-ի յիշածներից, կայ նաև մի ուրիշ յօդուած՝ պ. Ե. Մաղաթեանի, Շահազիզի մասին, որը, իբր նորութիւն, չէր կարող աչքի չընկնել մանաւանդ այն մարդուն, որը այդքան փոփոխութիւններ է սիրում։*

*Եթէ մի օրգան ուզում է որ իւր ցուցմունքները, իւր նկատողութիւնները մեզ համար ուսանելի լինեն և ոչ թէ արհամարհանքի տանք այդ նկատողութիւնները, ապա նա պէտք է համոզմունքով խօսէ. իսկ համոզմունքը ենթադրում է կատարեալ անկեղծութիւն։ Եւ մենք վերը տեսանք որ «Տարազ»-ի գոնէ այդ մի նկատողութեան մէջ անկեղծութիւնը պակասում է։*

Անկեղծութեան պակասութիւնը այդպիսով հաստատուած լինելով նոյն իսկ զովանանքի մէջ, տեսնենք թէ ինչպէս է այդ պակասութիւնը արտայայտուում պախարակման մէջ։ Որովհետև «Ցարազ»-ի կրիտիկոսը ցեխի հետ է հաւասարացնում «Մուրճ»-ի մի աշխատակցին՝ պ. Ալ. Նամալեանին, որը արդէն տասնեակ պատկերներ է տուել «Մուրճ»-ին և որից մենք չոս ունինք, որ նա աւելի ևս մեծ տեղ կը բռնէ մեր ամսագրում։ Թողնելով Նամալեանի պատկերների գնահատութիւնը աւելի յուրջ քննադատութեան, մենք այստեղ կը բացատրենք միայն, թէ ինչու մեր ընթերցողներին ձանձրոյթ պատճառած չենք համարում, տպելով նորա պատկերները թէկուզ «Մուրճ»-ի ամեն մի համարում։ («Ցարազը», նկատեցէք այդ, «Մուրճ»-ի միաձեութիւնը կարծում է ապացուցած լինել, վկայելով թէ «Մուրճ»-ի մէջ շատ են լաճախ երևում Նամալեանի պատկերները)։

Նամալեանը մեր բելետրիստներից նա է, որ սիրում է ամենից վարճ գրել, դուրս մղելով իւր գրուածքներից այն բոլորը, ինչ նշանակած է միայն գրուածքը «հաստացնելու»։ Դա այնքան մեծ արժանաւորութիւն է, որ արժէ նոցա տպել թէկուզ հէնց մեր գրողներից շատերին օրինակ տալու համար։ Որովհետև վէպերի և պատկերների մէջ աւելորդաբանութիւններ անելը մի կատարեալ ախտ է, որով վարակուած են մեր գրողներից մանաւանդ նոքա, որոնք գրուածքի մէջ գեղարուեստը իսպառ մոռացութեան են տալիս։ Այդ ախտով վարակուած են թէ մեր հին գրողներից շատերը և թէ նոր սկսողները. Առանց կրճատելու և մասամբ անգամ փոփոխելու—այդ գրուածքները տպել անհնարին է լինում «Մուրճ»-ի մէջ։ Այդ գրողները, որոնց լաճախ չի պակասում նոյն իսկ տաղանդը, սովոր չեն գրուածքը հշոնել գրականօրէն։ Մեր գիտեցածով այդ ընդհանուրից լաւ բացառութիւններ կազմողներն են, մեր գրականութեան մէջ առհասարակ, Ռաֆայէլ Պատկանեան իւր թէև ոչ միշտ գիւրամատչելի բարբառով գրած վէպիկներով, ապա Շիրուանզադէ և Լէօ։ Լաւ հասկացէք, որ մենք զորանով տաղանդների չափը չենք ուզում որոշել, այլ միայն և միմիայն նոցա վիպական գրուածների հշոնութեան աստիճանը՝ զուտ գրական տեսակէտից։ Եւ նորագոյն գրողներից այդ կատեգորիային մենք կարծում ենք թէ պատկանում է նաև պ. Ալ. Նամալեան։

Բայց գրական խիստ մշակումը արժանաւորութիւն է միայն, երբ գրուածքը ինքը միտք է ամփոփում իւր մէջ և երբ այդ միտքը գրական մշակման նիւթ կարող է ծառայել։

Դէ հիմա մեր զատողութիւնը կարող է սարերով տարբերուել «Ցարազ»-ի գաղափարներից այն մասին, թէ ինչն է «հետաքրքրական» և ինչը չէ «հետաքրքրական», որովհետև հետաքրքական լինելը պայմանաւորուում է մեծ մասամբ գրուածքի նիւթով և նորանով թէ ինչպէս է ըմբռնել հեղինակը իւր դիտողութիւնը։ Բայց թէ յատկապէս պ. Նամալեանի գրուածների արժանաւորութեան մասին ոչ թէ «մի կարծիք» կալ կազմուած, որը «Ցարազ»-ինն է, այլ և ուրիշ կարծիքներ կան գրականութեան հետեող շրջանների մէջ, այդ, բացի մեր անձնական կարծիքից, ապացուցւում է մեր լսածներով և մեր ստացած մասնաւոր նամակներով։ Մենք այդ վկայութիւնները դեռ ևս քննադատութեան վերջին խօսքը չենք համարում, բայց մենք լիշատակում ենք այդ, ցոյց տալու համար որ նաև վիպական գրուածների համար, որպէս և իւր ժամանակին մենք այդ ասել ենք բանաստեղծութեան մասին, մեր հայեացքը կարող էր չը գնահատել մեր մամուլի մէջ, բայց ոչ անպայման կերպով նաև հասարակութեան կողմից։

Իսկ վկայութիւններ այն բանի համար, որ մենք չենք սխալուել հիւրընկալելով պ. Նամալեանի գրուածքները, ունենք թէ բերանացի և թէ գրաւոր։ Մենք առաջ կը բերենք նոցանից միայն մի-երկուսը։ Հէնց նոյն № 3-ում պ. Ղազարեանցը, որ այնքան լափշտակութեամբ խօսում է Գլէբ Ուսպենսկու մասին, գրեթէ նոյն լափշտակութեամբ, իւր լօղուածի վերջում, խօսում է նաև պ. Նամալեանի պատկերներից մէկի մասին։

Մեր բարեկամներից և աշխատակիցներից մէկը, պ. Ն. Մաղաթեան, որի համար լամենայն դէպս պէտք է խոստովանել թէ գրականութեան ճաշակ ունի, իւր մի նամակով առ 31 մարտի, մեզ ուղղած, գրում է՝ «Նամալեանը խոստանում է լաւ վիպագիր դուրս գալ»։ Բերանացի վկայութիւնների մասին խօսելը շատ անլարմար է. կարող ենք միայն աւելացնել, որ «Ցարազ»-ի վարմունքը (որովհետև քննադատութիւն չենք կարող անուանել նորա խօսքերը, այլ միայն մի վարմունք) թերևս միմիայն դէպի հեղինակը տածած թշնամական զգացմունքով կարելի է բացատրել, բայց ոչ երբէք նորանով, որ «Ցարազ»-ը զորանով ցանկացած լինի «Մուրճ»-ի խմբագրութեան անկեղծ խորհուրդ տալ։

Թող մեզ ծուռ չը հասկանան. մենք այս տողերով չենք ուզում կանխել գրական քննադատութեան կարծիքը պ. Նամալեանի մասին. այս բոլորով մենք միայն ուզեցինք պաշտպանել մեր տեսակէտը։ Եւ մենք հաստատ համոզուած ենք, որ

տեղ տալով պ. Նամալեանին, մենք խմբագրական սխալ չենք գործել։

† ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ ՕՑԼԴԱ ՖԷՕԴՈՐՈՎՆԱՑԻ ՄԱՀԸ։ Վախճանուեց Նախկին փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեւիչի ամուսինը, որը Թողել է մեր երկրում անմոռանալի միջատակներ գլխաւորապէս այն իգական գիմնազիաների և պրոգիմնազիաների շնորհիւ, որ հանգուցեալը հիմնեց մեր երկրի այլ և այլ քաղաքներում։ Մահուան լուրը Թագաւոր-կայսրը հաղորդեց մի մանիֆեստով, տպուած պաշտօնական „Правительственный Вѣстникъ"-ում, որ ահա՝

«Ամենակարող Աստուծուն հաճելի եղաւ կանչել Իւր մօտ Մեր ամենասիրելի հօր-եղբօրկին Մեծ Իշխանուհի Օլգա Ֆէոդորովնային։ Նորին Կայսերական Բարձրութիւնը, ուղևորուելով Ղրիմ հիւանդութիւնից բուժուելու համար, վախճանուեց Խարկով քաղաքում, 31-ն մարտի, 52 տարեկան հասակում։ Հաղորդելով այս ողբալի անցքի մասին, Մենք հաւատացած ենք, որ Մեր բոլոր հաւատարիմ հպատակները մասնակից կը լինեն այն ցաւին, որ հասաւ Մեր Կայսերական Տանը և կը միացնեն իրանց աղօթքները Մերի հետ՝ հանգուցեալ Մեծ Իշխանուհու հոգու հանգստեան համար։



---

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ։